

ՊԵՐԻՈՂՈՆՏԻ ԶԳԱՅԱԿԱՆ ԱՊԱՐԱՏ. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱ- ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՌԵԱԿՑԻԱՆ՝ ՄԵԿԱԿԱՆ ԿԱՍ ԲԼՈԿԱՅԻՆ ՕՐԹՈՊԵԴԻԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՎ ՎԵՐԱԿԱՆՉՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Սանոսյան Զ.Վ.¹, Զովհաննիսյան Ս.Ռ.², Թորգոմյան Ա.Լ.³

¹Մոսկվայի պետ. բժշկա-ստոմատոլոգիական համալսարան, Մոսկվա, Ռուսաստան

²Երևանի պետ. բժշկական համալսարանի օրթոպեդիկ ստոմատոլոգիայի ամբիոն, Երևան, Հայաստան

³Երևանի պետ. բժշկական համալսարանի նորմալ ֆիզիոլոգիայի ամբիոն, Երևան, Հայաստան

Այս հետազոտության նպատակն է ուսումնասիրել մարդու տարբեր ատամնախմբերում պերիոդոնտի նյարդային վերջույթների կառուցվածքի և տեղակայման առանձնահատկությունները, ինչպես նաև՝ «Պերիոսենսումեր» սարքով ուսումնասիրել ֆրոնտալ ատամների պերիոդոնտի զգայական ֆունկցիան՝ տարբեր օրթոպեդիկ կառույցներով բուժման ժամանակ: Մեր կողմից իրականացված մորֆոլոգիական հետազոտությունների ժամանակ պարզվել է, որ մարդու ատամների պերիոդոնտալ կապանն օժտված է առատ ռեցեպտորային ապարատով: Մարդու ատամնաշարի պերիոդոնտի ռեցեպտորները դասվում են այսպես կոչված «ազատ նյարդային վերջույթներին», որոնց մեծ մասը կծիկանման և թփանման են: Պերիոդոնտի սենսոր ապարատի ֆունկցիոնալ վիճակի հետազոտման ժամանակ կարելի է փաստել, որ սննդային օբյեկտի «պահման» փուլում, որի ժամանակ գործադրվում է ամենաբիչ ուժ, տեղի է ունենում ծնոտների տեղաշարժ և նրանց օպտիմալ փոխդասավորում: Անտագոնիստ ատամների միջև սննդային օբյեկտի պահման ընթացքում տեղի է ունենում նրա դիրքի ու բաղադրության թեստավորում: Ֆրոնտալ ատամների կտրիչ եզրերի տեղաշարժը և դիրքավորումը՝ սննդային օբյեկտի նկատմամբ, պահպանվում են պերիոդոնտալ ռեցեպտորների զգացողության հաշվին: Պերիոդոնտի զգայական ֆունկցիայի գնահատման մեթոդը և զգայական ռեակցիայի դիսամիկան («պահման» և «ճեղքման» փուլերում) կարող են կիրառվել որպես ֆունկցիոնալ ախտորոշման մեթոդ՝ օրթոպեդիկ ստոմատոլոգիայի կլինիկայում: